ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. նոյեմբերի 26-ից 29-ը Մեծ Բրիտանիա,ք. Լոնդոն

կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Հովհաննես Հարությունյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Մեծ Բրիտանիա, ք. Լոնդոն նոյեմբերի 26-29-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի Թագավորության դեսպանատուն, MINEX Eurasia 2023, Mines & money համաժողով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն MINEX Eurasia 2023, Mines & money հանքարդյունաբերության միջազգային ներդրումային համաժողովներին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Հանքարդյունաբերության ոլորտի արդի մարտահրավերները, ներդրումային միջավայրի բարելավումներ և կրիտիկական մետաղների պահանջարկի աճ:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Մասնակցել եմ MINEX Eurasia 2023 բացման արարողությանը, համաժողովի լիագումար նստաշրջանին և այցելել ցուցահանդեսային տաղավարներ:

   MINEX Eurasia 2023 համաժողովի նիստին իմ ելույթի շրջանակում ներկայացրել եմ Հանքարդյունաբերության ապագան ՀՀ-ում վերնագրով պրեզենտացիան: Որը մեծ հետաքրքրություն առաջացրեց ներկաների մոտ: Նպատակը ՀՀ-ում

իրականացված և սպասվելիք փոփոխություններն են, որոնք միտված են բարելավել Հայաստանի Հանրապետության ներդրումային գրավչությունը:

Աշխատանքային հանդիպում եմ ունեցել ՄԲԹ-ի երկրաբանական ծառայության ղեկավարության հետ և քննարկել հետագա համագործակցության ուղությունները:

Mines & Money ներդրումային ցուցահանդեսի շրջանակներում աշխատանքնային հանդիպում եմ ունեցել՝

- KNIGHT PIESOLD կազմակերպության ղեկավարության հետ, թեման վերաբերվում էր ՀՀ-ում իրենց հետաքրքրություններին: Քննարկեցինք նաև այն ստանդարտները, որոնցով իրենք առաջանորդվում են:

- IGS միջազգային խորհրդատվական կազմակերպության ղեկավար կազմի հետ, հիմնական թեման նույնպես ստանդարտներ էին որոնցով առաջնորդվում են:

Հանդիպում տեղի ունեցավ London Metal Exchange բորսայում ղեկավարության հետ, որի ժամանակ քննարկվեցին համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև հետևեցինք այն պրոցեսին թե ինչպես են տեղի ունենում բորսայում մետաղների գների հետ կապված իրական բանակցությունները:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների ընթացքում հիմնական շեշտադրումը ՀՀ-ում հանքարդյունաբերության ոլորտում ռազմավարությամբ ամրագրված փոփոխությունների իրականացման ընթացքում համագործակցության հնարավորությունների սահմանումն էր:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպումների ժամանակ ամրագրված համագործակցության ուղղությունները կիսվեցի նաև ՄԲԹ-ում ՀՀ Դեսպանության գործընկերների հետ, որպեսզի հետագա աշխատանքները կրեն ավելի ինստիտուտուցիոնալ բնույթ կրեն:

Ակընկալում եմ համագործակցության արդյունքում Հանքարդյունաբերության ռազմավարության իրագործման տարբեր փուլերում՝ մասնավորապես միջազգային լավագույն ստանդարտների ներդրման արդյունքում

կանխատեսելիության ապահովում, իսկ որպես հետևանք ոլորտի հանդեպ ներդրումային գրավչության բարձրացում:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

01 դեկտեմբերի 2023թ.